

Միջոցառում՝ նվիրված Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի 70-րդ և Շուշիի ազատագրման 23-րդ տարեդարձերին

09.05.2015



Մ/թ մայիսի 8-ին, ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալներ Սամվել Թարվերդյանի, Մելս Հարությունյանի, ՀՀ ՊՆ 4-րդ բանակային կորպուսի հրամանատար, գեներալ-մայոր Անդրանիկ Մակարյանի մասնակցությամբ Եղեգնաձորի մշակույթի տան դահլիճում տեղի ունեցավ միջոցառում՝ նվիրված Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի 70-րդ և Շուշիի ազատագրման 23-րդ տարեդարձերին: Ներկա էին Եղեգնաձորի տարածաշրջանի հոգևոր հովիվ Ս. Վազգեն քին. Հովհաննիսյանը, մարզպետարանի պաշտոնյաներ, զինվորականներ, ազատամարտիկներ, ուսուցիչներ, աշակերտներ և այլք:

Միջոցառումը կազմակերպվել էր Եղեգնաձորի ավագ դպրոցի և Վայոց ձորի մարզային երիտասարդական կենտրոնի կողմից: Միջոցառման ընթացքում 4-րդ բանակային կորպուսի հրամանատար, գեներալ-մայոր Անդրանիկ Մակարյանը պարզևներ հանձնեց նի շարք վետերանների և ազատամարտիկների: